# SMS ծանուցումների ծառայություն

Ինտերնետային բանկային համակարգում գրանցված լինելու դեպքում, Դուք կարող եք ակտիվացնել **SMS** ծանուցումների անվճար ծառայությունը, որը Ձեզ թույլ կտա ստանալ **SMS** ծանուցումներ Ձեր հաշիվներից կատարված բոլոր գործարքների վերաբերյալ:

Մենք խրախուսում ենք Ձեզ ակտիվացնել **SMS** ծառայությունը հարմարավետության և անվտանգության նկատառումներից ելնելով:

Ծառայության ակտիվացումը, օգտագործումը և կառավարումը դյուրին է և անվճար:

**SMS** ծառայությունը ակտիվացնելու համար հետևեք ստորև նշված պարզ ցուցումներին**.**

1. Մուտք գործեք Ինտերնետային բանկային համակարգ**,** ձախակողմյան մենյուից ընտրեք **«**Ծանուցող ծառայություններ **»,** բաժինը**,** սեղմեք **«**Կառավարել ծանուցումները**»,** որից հետո՝ **«**Նախընտրություններ**»** կոճակը **(**տես նկար **1):**




Նկար **1**

**2.** Կբացվի «Ծանուցումների նախընտրելի տարբերակ» էջը: «Առաքման կարգավիճակ» ենթաբաժնում ընտրեք «Առաքումը՝ Միացված» տարբերակը ինչպես ցուցադրված է ստորև ներկայացված պատկերում: Եթե ցանկանում եք փոփոխել Ձեր բջջային հեռախոսի համարը, որին ստանալու եք հաղորդագրությունները, ապա դա հնարավոր է անել «Ծանուցման տարբերակ» ենթաբաժնում:

Դուք կարող եք փոփոխել նաև ծանուցումների ստացման ժամը, սակայն խորհուրդ ենք տալիս թողնել «Ծանուցման առաջանալուն պես» տարբերակը:

Երբ բոլոր նախընտրությունները մուտքագրված են, սեղմեք «Փոփոխել», այնուհետև՝ «Հաստատել» կոճակը (տես նկար 2):




Նկար **2**

**3.** Վերադարձեք «Կառավարել ծանուցումները» բաժին և սեղմեք «Ընտրել ծանուցումը» այն հաշվեհամարի համար, որից իրականացվող գործարքներից ցանկանում եք ստանալ ծանուցումներ (տես նկար **3**):




Նկար **3**

**4.** Ընտրեք այն գործարք(ներ)ը, որոնց համար ցանկանում եք ակտիվացնել ծանուցումները, մուտքագրեք ցանկալի սահմանաչափ(եր)ը և սեղմեք **«**Փոփոխել ծանուցումը**»** կոճակը (տես նկար **4**)**:**




Նկար **4**

**5.** Հաստատեք կատարված փոփոխությունները՝ սեղմելով **«**Հաստատել**»** կոճակը**,** եթե այլ փոփոխությունների կարիք չկա (տես նկար **5**)**:**




Նկար **5**

Ծառայության ակտիվացման վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում, խնդրում ենք կապ հաստատել Ինտերնետային բանկային համակարգի աջակցության կենտրոնի հետ **+374 60 655 444** շուրջօրյա հեռախոսահամարով:

[1]Ինտերնետային/Մոբայլ բանկային ծառայությունները տրամադրվում են միայն ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին:

## Ունե՞ք հարցեր

Զանգահարեք տեխնիկական աջակցության կենտրոն՝
**+374 60 655 444**

Մեր հեռախոսային կենտրոնն աշխատում է շուրջօրյա:

Թարմացվել է՝ **11/01/2019 15:00**